

ՄՏԵՂԾՎԱԾ ԱՍՏԾՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գործածել Աստծո տված պարգևները

Մաս 4

Քարոզը մեկ նախադասությամբ:

Ես ստեղծված եմ Աստծո ծառայության համար:

Հոգևոր պարգևները տված են յուրաքանչյուրիս այն մտքով, որ կարողանանք ոգտակար լինել ամբողջ եկեղեցուն:

Ա Կորնթացիներին 12:7

* Ինչո՞ւ եմ ես այստեղ

«Աստված իմ ծնվելուց առաջ իսկ ինձ ընտրել և իր շնորհով այս պաշտոնին էր կոչել» Գաղատացի 1:15

«Դուք ընտրյալ մի ցեղ եք... Աստծո սեփական ժողովուրդը և ձեր պարտականությունն է քարոզել նրա՝ գործունը, ով խավարից ձեզ կանչեց իր սքանչելի լույսին:» Ա Պետրոս 2:9

* Ին՞չ է արգելք հանդիսանում իմ ճանապարհին

• Պատճառաբանություն: Ես շատ զբաղված եմ:

• Աստծո հիշեցումը: Նախ փնտրիր Աստծո կամքը

«Դուք նախ խնդրե՛ք, որ Աստծու արքայությունը գա, աշխատե՛ք կատարեք նրա կամքը, և Աստված այդ բոլորը ավելիով կտա ձեզ:» Մատթեոս 6:33

• Պատճառաբանություն: Ես չունեմ համապատասխան կարողությունները:

• Աստծո հիշեցումը: Հենվիր Աստծո գործության վրա

«Իմ գործությունն ամբողջապես հայտնվում է մարդու տկարության մեջ: Ահա թե ինչու մեծ հաճությամբ պարծենում եմ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ հաստատվի Քրիստոսի գործությունը:» Բ Կորնթացիներին 12:9

«Թող խաղաղության Աստվածը կարողություն տա ձեզ... իր կամքը կատարեք: Ինչ որ կամենում է Աստված, թող այն էլ ներգործի մեր մեջ Հիսուս Քրիստոսի միջոցով:» Եբրայեցիներին 13:20-21

- Պատճառաբանություն: Ես վախենում եմ
- Աստծո հիշեցումը: Վստահիր Աստծո պլանին որ քո համար ունի

«Մենք Աստծու նոր ստեղծագործությունն ենք, քանի որ միացած ենք Հիսուս Քրիստոսին. Ստեղծված ենք կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որպեսզի դրանցով լցնենք մեր կյանքը:» Եփեսացիներին 2:10

* Ե՞րբ կվարցատրվեմ

«Չձանձրանանք բարիք գործելուց, որովհետև եթե հարատևենք, արդյունքն անպայման կքաղենք իր ժամանակին:» Գաղատացի 6:9

«Մեզնից յուրաքանչյուրն իր անձի համար հաշիվ է տալու Աստծուն:» Հռոմեացիներին 14:12

* Ինչպե՞ս սկսեմ

«Որևէ մեկը, որ միացած է Քրիստոսին, նոր արարած է. Նա այլևս այն չէ, ինչ որ նախապես էր, որովհետև նա ամբողջությամբ նորոգվեց:» Բ Կորնթացիներին 5:17

- * Ընդունիր Աստծո կամքը քո կյանքի համար
- * Հրաժարվիր որոշ անկարևոր բաներ անելուց
- * Ծառայիր ուրիշներին